ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ալ. Մյասնիկյանի անվան Երևանի Պետական Հանրային գրադարանը հայ մեծ գրող Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ պատրաստում է Աբովյանի ստեղծագործությունների, ինչպես նաև նրան վերաբերող գրականության բիբլիոգրաֆիան, որը լինելու է 6 մամուլ ծավալով։

Այդ աշխատանքը կատարում է գրադարանի ավագ գիտական աշխատող Ա. Բաբայանը։

***

Հուլիսի սկզբներին, ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակությամբ, լույս կտեսնի Խ. Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի երրորդ հատորը, որը պարունակում է «Վերք Հայաստանի» վեպի գիտականորեն ստուգված տեքստը, ինչպես և այդ վեպի չհրապարակված տարբերակն ու հատվածներ։ Տեքստի խմբագրումը և ծանոթագրությունները կատարել է ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Մուրադյանը։

Մինչ հոբելյանը լույս կտեսնեն Խ. Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի նաև առաջին և երկրորդ հատորները, որոնք ընդգրկում են նրա բանաստեղծությունները։ Առաջին հատորի տեքստը տպագրության է պատրաստել և ծանոթագրությունները գրել ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Նանումյանը, երկրորդ հատորինը—ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուներ Ա. Ասատրյանը և Ա. Մանուկյանը։

Տպագրվում է և շուտով լույս կտեսնի «Դիվան Խաչատուր Աբովյան»-ի երկրորդ հատորը (առաջին հատորը լույս է տեսել 1940 թվին)։ Դիվանի նյութերը տպագրության է պատրաստել ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Երվանդ Շահազիզը։

Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը պատրաստել է «Վերք Հայաստանի» վեպի ռուսերեն լրիվ թարգմանությունը։ Վեպի տող առ տող թարգմանությունը կատարել է Մ. Գևորգյանը, իսկ գեղարվեստական մշակումը՝ Ս. Շերվինսկին։

Վեպի թարգմանությունը, նրան կցված մեկնաբանություններով և բառարանով հանդերձ, գտնվում է տպագրման պրոցեսում և լույս կտեսնի հոբելյանական օրերին։

Հոբելյանական Հանձնաժողովի որոշման համաձայն «Վերք Հայաստանի» վեպի ռուսերեն տեքստը ուղարկված է եղբայրական ռեսպուբլիկաները՝ ՍՍՌՄ ժողովրդների լեզուներով թարգմանելու և հրատարակելու համար։ Ուղարկված են նաև Խ. Աբովյանի պատմվածքների («Առաջին սեր», «Թուրքի պղջիկը», «Բարեկամիս մոտ») և մի շարք բանաստեղծությունների տող առ տող թարգմանությունները։

Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը պատրաստում է Խ. Աբովյանին նվիրված «Գրական հետազոտություններ» պատմա-գրական ժողովածուի երրորդ հատորը։ Այս հատորի մեջ կընդգրկվեն հայ մեծանուն գրողի կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող հոդվածներ, ակնարկներ և գիտական աշխատություններ։

25 տպագրական մամուլ ծավալով այս ժողովածուի մեջ մտել են գրականագետների, պատմաբանների և լեզվաբանների 17 աշխատություն։

ԹՈՌԸ ՊԱՊԻ ՄԱՍԻՆ

Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտի ուսանողները պարապմունքներից հետո հավաքվեցին գրականության կաբինետում, որտեղ ինստիտուտի դասախոս Կոնստանդին Վարդանի Աբովյանը, Խաչատուր Աբովյանի թոռը, զրույց ունեցավ նրանց հետ իր նշանավոր պապի մասին։ Ահա այդ զրույցի համառոտ բովանդակությունը.

— 1827 թվին ռուսական զորքերը Հայաստանից դուրս քշեցին պարսիկ զավթիչներին և այդ օրվանից հայ ժողովուրդը ընդմիշտ իր բախտը կապեց ռուս մեծ ժողովրդի բախտի հետ։ Շփումը ազատասեր ռուս ժողովրդի և նրա առաջավոր մտավորականության հետ միանգամայն բարերար ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի համար։ Այդ տարիներին իմ պապը,— այն ժամանակ դեռևս պատանի,— ուղևորվեց Դորպատ, ներկայիս Տարտու քաղաքը (Էստոնական ՍՍՌ), որտեղ և ստացավ իր բարձրագույն կրթությունը։ Այդ ժամանակ նրա վրա մեծ տպավորություն էր թողել Պետերբուրգը։

1836 թվին Աբովյանը ուժ ու եռանդ ստացած վերադառնում է Երևան. նրա ցանկությունն էր այստեղ դպրոց բաց անել գյուղական ուսուցիչներ պատրաստելու համար. սակայն, նրա այս ցանկությունը մերժվում է։ Իր այս առաջին անաջողությունից հետո Աբովյանը մեկնում է Թիֆլիս, ուր զբաղվում էր մանկավարժական գործունեությամբ։ Այն 30 հայ, վրացի ու ադրբեջանցի պատանիները, որոնց հետ Աբովյանը պարապում էր իր կողմից մշակված նոր մանկավարժական մեթոդով, շուտով, ինչպես լեզուների, այնպես էլ մյուս առարկաների ուսումնասիրման գործում, մեծ հառաջադիմություն են ցուցաբերում։ Նրա աշակերտներից մեկը՝ Գաբրիել Սունդուկյանը հետագայում խոշոր դրամատուրգ դարձավ և առաջավոր դեր խաղաց հայ թատրոնի զարգացման գործում։

1840 թվին Խաչատուր Աբովյանն ամուսնացավ։ Երիտասարդ ամուսինները շուտով մի արու զավակ ունեցան, որին կոչեցին Վարդան, իսկ երկու տարի հետո էլ ծնվեց դուստրը, որին անվանեցին Զարմանդուխտ։

Մի քանի բոպե զրույցը ընդհատելով Կ. Աբովյանը ներկաներին ցույց է տալիս մեծ գրողի կնոջ՝ Էմիլիայի, որդու, աղջկա, թոռների ու ծոռների լուսանկարները։ Ու ապա շարունակում.

— Երեխաները շատ շուտ զրկվեցին իրենց հորից, դրա համար էլ նրանց հիշողությունները հոր՝ Խ. Աբովյանի մասին կցկտուր էին։

1843 թվին Աբովյանը վերադառնում է Երևան և աշխատանքի անցնում Երևանի գավառային ուսումնարանում՝ տեսչի պաշտոնով։ Սակայն, այստեղ ևս, իր առաջադեմ հայացքների ու գործունեության համար, նա շուտով արժանանում է վարչության անբարյացակամ վերաբերմունքին։

Վարչությանը զայրույթ պատճառող, «արարքներից» մեկը հանդիսանում էր այն, որ իմ պապը համարձակություն էր ունեցել գավառային ուսումնարանի հաշվետվությունը կազմելու հայերեն լեզվով։ Պապիս նկատմամբ ատելությունն այնքան ուժեղ էր, որ նրա մահվանից 40 տարի անց երբ հայրս դիմեց գիմնազիայի դիրեկտորին և խնդրեց իրեն դասաժամեր տրամադրել, մերժում ստացավ։ Մի քանի տարի հետո Վ. Բոմանովսկին իր «Երևանի գիմնազիայի պատմությունը» գրքում գրել էր. «Դիմում ներկայացնողը, Վարդան Աբովյանը—դա այն մարդն է, որը մի քանի տարի առաջ անհայտացել էր ու նորից երևացել»։ Իմ հորը սխալմամբ այսպիսով նա ընդունել էր Խաչատուր Աբովյանի տեղը։

Հույս չունենալով որևէ օժանդակություն ստանալու, Խաչատուր Աբովյանը իրեն հատուկ անսպառ եռանդով գործի է անցնում։ 1843 թվին լույս է տեսնում նրա կենդանության օրոք հրատարակության արժանացած միակ գիրքը՝ «Նախաշավիղ»-ը։ Թիֆլիսի Կարապետ եպիսկոպոսի կարգադրությամբ այս գիրքը այրում են կրակի վրա։

Ուսանողները մեծ ուշադրությամբ ունկընդրում են պատմության այն մասը, որ վերաբերում էր Խաչատուր Աբովյանի բարեկամական սերտ կապերին, որոնցով նա կապված էր ադրբեջանցի գրող Մ. Ֆ. Ախունդովի ու պոետ Միրզա-Շաֆիի և վրացական առաջավոր մտավորականության ներկայացուցիչների հետ։ Այնուհետև Կ. Աբովյանը պատմում է այն մասին, թե ինչպես մեծ գրողը սիրում էր հայկական ու եղբայրական ժողովուրդների ֆոլկլորը և թե ինչպես քրդերի սահեղծագործությանը վերաբերող նրա մի շարք հոդվածները տպագրել են Թիֆլիսում լույս տեսնող թերթերում։

Խաչատուր Աբովյանի հոգատարությունը իր հարազատ ժողովրդի կարիքների հանդեպ

ցայտուն կերպով դրսևորվում է պատմողի բերած օրինակներում.

— Եղել է մի այսպիսի դեպք. Աբովյանը հանձն է առել իր հայրենի գյուղի՝ Քանաքեռի բնակիչների շահերի պաշտպանությունը։ Պարսից բեկերը, որոնք մնացել էին Երևանի շրջակայքում, ռուսական զորքերի գալուց հետո, անօրինական կերպով գյուղացիներից խլել էին «Մուրատ-Թափայի» ամենաբերրի հողամասը։ Խաչատուր Աբովյանի հետապնդումների շնորհիվ այդ հողամասը նորից վերադարձվում է գյուղացիներին։ Այդ օրվանից անցել է ավելի քան 100 տարի։ Ներկայումս «Մուրատ-Թափայի» հողամասը մշակվում է կոլխոզի տրակտորներով և առատ բերք է տալիս։ Բայց դեռ այսօր էլ շատ ծերունի-կոլխոզնիկներ պահպանում են Խաչատուր Աբովյանի այդ պաշտպանությանը վերաբերող հուշերը։

1848 թվի ապրիլի 14-ին մեծ գրողը տնից դուրս եկավ ու այլևս ետ չվերադարձավ։ Մի քանի օր տևող որոնումները ոչ մի արդյունք չտվին։ Հայտնի է, որ վերջին օրերին Խաչատուր Աբովյանը եղել է մռայլված, մտախոհ, լռակյաց ու հրաժարվել է սնունդ ընդունելուց։ Դժվար է ասել, թե ինչպես է նա մահ գտել, բայց և այնպես պարզ է, որ դրանում հանցավոր են մութ ուժերը, որոնք իշխում էին այն տարիներին։ Ըստ հարազատներիս պատմածների ինձ հայտնի է, որ պապս հաճախ էր կրկնում այս խոսքերը. «Ամեն ժամ մտածել եմ, որ իմ վերջը— դա Սիբիրն է»։

Գրողի կինը՝ Էմիլիա Աբովյանը խնամքով պահպանել է նրա ձեռագիրներն ու գրքերը։ Ամեն անգամ, երբ դռան բախոց էր լսվում, նա վեր էր թռչում տեղից ու նրան թվում էր, թե այդ ամուսինն է վերադարձել։ Դժբախտ կինը մահացավ 1870 թվին։ Խաչատուր Աբովյանի գրական ժառանգությունը անցավ հորս ձեռքը, իսկ նրա մահվանից հետո էլ, 1896 թվին, անցավ մեր ձեռքը։ Թշնամու արշավանքների օրերին, երբ հարկադրված էինք մեր ամբողջ ունեցվածքը լքելու և երբ ամեն քայլափոխին վտանգ էր սպառնում, մենք ամեն ճիգ գործադրեցինք փրկելու համար այն թանկարժեք ձեռագիրները, որոնց վիճակով չհետաքրքրվեցին ոչ ցարական աստիճանավորները և ոչ էլ սրանց փոխարեն իշխանության գլուխ անցած դաշնակները։

1917 թվին Ալեքսանդրապոլում իմ աշակերտներից մեկը մի նամակ բերեց մոտս, որ ինչպես պարզվեց, ստորագրված էր Խաչատուր Աբովյանի ձեռքով։ Երեխան պատմեց, որ մի խանութում խանութպանը այդպիսի թերթերում վաճառված մթերքներ էր փաթաթում։ Ես վազեցի այդ խանութը, որպեսզի պահանջվող ամեն մի գնով ձեռք բերեի այդ փաստաթղթերը։ Սակայն, «Խաչատուր Աբովյանի գործ»-ից, որ այլ թղթերի հետ միասին խանութպանը գնել էր Երևանի նահանգային արխիվի աստիճանավորներից, այլևս ոչինչ չէր մնացել։ Պատմական արժեք ներկայացնող փաստաթղթերը օգտագործվել էին մթերքներ փաթաթելու համար։

Սովետական իշխանության տարիներին մենք Պետական Գրական թանգարանին հանձնեցինք անհայտ նկարչի կողմից պատրաստված Աբովյանի միակ յուղաներկ նկարը, «Վերք Հայաստանի» վեպի երկու ձեռագիր օրինակները, տասնյակ այլ ձեռագիրներ, նամակներ ու փաստաթղթեր, որոնց թվում նաև քրդական ֆոլկլորի գրանցումների տետրը և 1917 թվին գտնված նամակը։ Խաչատուր Աբովյանի գրական ժառանգությունն այսօր դարձել է համաժողովրդական սեփականություն։

ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՆՈՐԱԳՅՈՒՏ ՄԻ ՎԱՎԵՐԱԿԱՆԻ ԱՌԹԻՎ

«Սովետական Հայաստան» օրաթերթի 1948 թ. ապրիլի 7-ի համարում մի հոդված տպագրվեց Խաչատուր Աբովյանին վերաբերող վերջերս հայտնաբերված մի նոր վավերականի ու նրա համառոտ բովանդակության մասին*)։

Մեր ուշադրությունից բնականաբար վրիպել չէր կարող Խաչատուր Աբովյանին վերաբերող նոր վավերականի հայտնաբերման հանգամանքը, քանի որ երկար ժամանակից ի վեր զբաղվում ենք հայ այդ նշանավոր գրողի ու մեծ մարդու կյանքի և գործունեության ուսումնասիրությամբ. ուստի և ուշադրությամբ այդ համառոտ ու հապճեպ գրված հոդվածը կարդալուց հետո շտապեցինք տեսնել ու թերթել բուն իսկ

*) Ա. Ասատրյան և Գ. Ստեփանյան.— Նոր նյութեր Խաչատուր Աբովյանի և նրա ժամանակակիցների մասին, «Ս. Հ.» № 8231, էջ 3։